

ԼԵՎՈՆ ՇԱՆՔԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՍ. ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Լևոն Շանքի՝ Ստ. Լիսիցյանին գրած անտիպ նամակներից մի նոր խումբ ենք ներկայացնում «Բանբերի» ընթերցողներին: Նախորդ երկու հրապարակումներից առաջինով՝ կարևորեցինք հայության համար ճակատագրական տարիներին՝ 1914—1917 թթ. գրած նամակները, որոնք բերում են գրողի անմիջական արձագանքները այդ տարիների ողբերգական եղելություններին: Դրանք 1896-ից սկիզբ առած նամակագրության վերջնամասն են կազմում:

Երկրորդ հրապարակմամբ՝ ընթերցողին տվել ենք 1913-ի՝ Շանքի համար աստեղալին թվականի նամակները, որոնց առանցքը «Հին աստվածներ» գրաման է: Ջանացել ենք մասնագետների ուշադրությանը նախ հանձնել հանրահայտ երկի աղմկալից հաջողության օրերին գրողի արտահայտած մտքերն ու դատողությունները: Այդպիսով ամբողջացել է 1913—1917 թթ. նամակների հրապարակումը: Մնացած անտիպները՝ 1896—1912 թթ. գրած, հրատարակում ենք ժամանակագրական սկզբունքով և այս հրապարակմամբ տալիս 1896 և 1897 թթ. նամակները:

Հիշյալ հրապարակումների առիթով բավանանաչափ խոսել ենք ականավոր մանկավարժ, ազգագրագետ ու պատմաբան Ստեփան Լիսիցյանի՝ ու մեծ գրող Լևոն Շանքի երկարատև ու սերտ բարեկամության մասին: Սկիզբ առնելով Գևորգյան ճեմարանից՝ ուսուցիչ ու գրեթե նրան տարեկից տաղանդավոր աշակերտի բարեկամությունը այնուհետև նշանավորվում է փոխադարձ բացառիկ նվիրվածությամբ:

Հանգամանքները, որոնցում Շանքը դիմում է իր ուսուցիչ-բարեկամին, նրա համար եղել են խորապես ճգնաժամային: Գրական շրջաններում արդեն ճանաչում գտած գրողը, նյութական պատճառներով, հարկազրկված էր. թողնել բարձրագույն ուսումնառությունը և դիմել Լիսիցյանին:

Տեսնել է պետք, թե ներկայացվող նամակներից առաջինները գրելիս բարոյական ինչ ծանր կաշկանդումներ է հաղթահարել Շանքը, ինչ հարկադրանքով է շարժում գրիչը, և ինչպիսի ծանր ճիգերով են բառերը կապակցվում: Եվ դարձյալ արժե տեսնել, թե ինչպիսի անկաշկանդ, ընկերական մտերմությամբ է գրողը հաղորդակցվում իր բարեկամին օրեր անց, երբ նրա շանքերով դուրս է ելնում խոր ճգնաժամից՝ դրսևորելով իր անմիջական ու զվարթ խառնվածքին բնորոշ ոճ՝ հաճախ մտերմիկ հումորով շաղախուն:

Ավելի հուսալի բարեկամ, քան իր երբեմնի ուսուցիչը, Շանքը չէր էլ կարող երևակայել, որն այնուհետև իր տաղանդավոր ընկերոջն ու բարեկամին օգնելը իր համար դարձրել է ճակատագրի պես մի բան: Բացառիկ այդ փաստը այնքան անկեղծորեն ցուցադրում է ինքը՝ Շանքը՝ նամակից նամակ իր շնորհակալ զգացմունքների փոփոխակումներով: Ահա մի քանի-որ առավել բնորոշները. «Դուն ես արդեն, ուրկի իմ հույսերս կը կախվեն», «... սահման մը կա, ուրկն անդին շնորհակալություն բառը նույնիսկ ծիծաղելի կը հնչե», «Երևի իմ բազմա է, իմ դրամական հաշիվներովս քեզի անվերջ շարշարել»: Երախտագիտությունը, վստահությունն ու մտերմությունը գրողին թույլ են տալիս հումորով խոսելու այնքան փափուկ հարցի շուրջ: «Ենդճ Ստեփան, — գրում է նա, — քեզի ով ըսավ իմ մեջս այդպես վստահություն ներշնչես, թե դուն ամեն կողմեն ստակ ձարելը կրնաս. բավական է, որ ուզես ու ձեռնարկես»: Վերջապես այս ամենը ընդհանրացնելու քաջությունն էլ չի պակասում, և դա էլ՝ ոչ առանց հումորի. «... որ իմ գրելիքս քեզի համար սպառնալիք է, կասկած չի կա, հավիտենական հանգրգրփող»:

Ցավոք չեն պահպանվել Ստ. Լիսիցյանի դրած նամակները, որով անհամեմատ հարուստ կլինեին մեր պատկերացումները, թե այս և թե շոշափված մյուս հարցերի վերաբերյալ:

Հրապարակվող նամակները մեծ գրողի ուսանողական կյանքը բնութագրող տարարնույթ փաստերի հետ արժեքավոր տեղեկություններ են պահպանում նաև այս շրջանի նրա ստեղծագործությունների՝ «Վերծին», «Դերասանուհին» վեպերի և «Դարձը» վիպակի վերաբերյալ:

¹ Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1992, թ. 1, էջ 121—147:

² Տե՛ս նույն տեղը, թ. 3, էջ 121—140:

Մասնավորապես արժեքավոր են «Շարձի» կապակցությամբ գրողի դատողությունները և՛ մի շարք առումներով: Համենայնդեպս առաջին հայացքով իսկ կարելի է երեք էական կողմ տեսնել՝ Նյութ, կենսազգացողություն և գեղարվեստականություն:

«Շարձը» վիպակում գրողը առաջին անգամ է պատկերում հոգևորականությանը, այդ պատճառով էլ նյութը համարում իր «ժանրին չի հարմարվող»: Պատկերվող մյուս կողմը Շանթը չի առանձնացնում, քանի որ այն ներկայացնում է առաջինի հետ հակադրության մեջ ու միաժամանակ: Ստացվում է փոխադարձորեն երևակող ու իրար ընդգծող կողմերի՝ հոգու կեց-ծիքը մարմնավորող կրոնականության և թրթռուն կյանքի՝ մերկ, անկեղծ, հակադրություն: Վարդապետացուի դարձն էլ դեպի կյանք կայանում է այս հակադրության հանգուցալուծումով:

Արթնացող կյանքի թրթռոն է Շանթը պատկերում սարկավազի կույս հոգում, որ արդեն իր «ժանրն» է և որը աննկատ չի անցել մեր գրականագիտության մեջ՝ սկսած Լեոյից ու Աղբալյանից...

Ինչու և ի՞նչ պատճառով է, ուրեմն, հոգևորականության թեման խորթ Շանթին: Միայն նրա՞ համար, որ արգահատելի է եղել, և խորշել է: Պարզվում է՝ այո՛: Այս գեահատականի հաստատում կարելի է դիտել հետագայում վարպետի գրչով ստեղծված «Շին աստվածներ» մեջ թեմայի յուրովի արտահայտումը:

Կրոնի ու հոգևորականության խոր ճանաչողությունը ապագա գրողը ձեռք է բերել Գևորգյան ճեմարանում սովորելու տարիներին: Նրա հայացքները հայտնի էին մտերիմներին, որի արտահայտությունն է և դիմելու այս ձևը. «Հա՛, իմ կրոնական հայացքները գիտես, — գրում է նա ընկերոջը, — գիտես և կրոնավորներու ատելությունն, զվվանքս դեպի վանքը և այն բուլբուլը, ինչ վանքին հետ կապված է»: Այս գրելուց ամիսներ առաջ նա ընկերոջը հազորդակցվել էր Ռուստովի, Նոր Նախիչևանի հայ հոգևորականությունից ստացած թարմ տպավորություններով. «Վա՛հ, վա՛հ այդ նոր տերտերները. ինձի համար այնպես տարօրինակ է տեսնել ընկերոջդ այդ երկար վերարկուններուն մեջ փաթթված, համրիչը ձեռքին...»: «Մեկ-երկու ճեմարանցի ընկերներու հանդիպեցա. ամեն միին ետևեն մեկը կը բուսնի. ամեն տեղ կան... Գիմա ա-նոնք գործ ունեն. բոլորն ալ վարդապետ կամ տերտեր»: Այսքան խոր ճանաչողությունից հետո էլ ընկերոջը գրում է. «Գուցե զարմանաս, ինչպես հանկարծ այդ շոր ու իմ ժանրիս չի հարմարվող Նյութին վրա ինկա. ինձի ալ շատ որոշ չէ. ըստ երևույթին հին տպավորություններ մեջս դիզված էին, որոնք վերջին Կովկաս գալես ավելի գրգռված դուրս հորդեցին»:

Ուրեմն Նյութը իրենը չէ՞ միայն «շոր», անհրապույր լինելու պատճառով, բայց տարիների կուտակում լինելով ու կյանքի հարկադրանքից ելք ստանալով՝ ստացել է նաև լուծման գուտ շանթյան ձև, որը այնքան ներդաշնակ է նախորդ ստեղծագործություններին, մի բան, որ նկատվել է անգամ անբարյացկամ քննադատության կողմից: Արդեն «Երազ օրերի» գեահատմամբ Լեոն էրոտոման՝ է կոչում Շանթին, և զարմանալի չէ, որ նա, առաջնորդվելով նույն շափանիչներով, «Շարձի» մեջ տեսնեք հեղինակի կողմից ամեն ինչի բերելն ու վերագրելը «կանացի մեի հաղթանակին»³:

Հետաքրքիր է, որ վիպակում մանկաբարձուհի պատկերելիս անգամ, որի շնորհիվ է զըլ-խավոր հերոսը դարձ կատարում, Շանթը առաջնորդվել է իրական փաստով: Կարծում ենք՝ այս հերոսի ստեղծման համար ազդակ է ծառայել Լիսիցյանի քեթիներից մեկը՝ Ռոզան, «որ կիսատ է թողել գիմնագիան, ընդունվել մանկաբարձական դասընթացները»⁴: Պատահական չէ, որ վիպակի մեջ էլ մանկաբարձուհին քեթի է...

Այս ամենով հանդերձ, իհարկե, շնք անտեսում թեմայի գրական-ավանդույթային աղեր-ները, որի մասին արդեն հանգամանորեն խոսվել է⁵:

Ինչ վերաբերում է մեր նկատած երրորդ կողմին՝ գեղարվեստականությանը, ապա կյան-

³ Տե՛ս Լեո, Ռուսահայ գրականության պատմություն, Վենետիկ, 1904, էջ 378: Նույն տեղում կարդում ենք. «Այդ պարծանքը (էրոտոման կոչվելու—Խ. Վ.) տալիս է նրան և «Դուր-սեցիներ» վիպը:

⁴ Նույն տեղում էջ 380:

⁵ «Շարձը» վիպակի Նյութի իրական հիմքերի վերաբերյալ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նույնպես ճեմարանական Ս. Վրացյանի հավաստումը: «Շարձի» Նյութը մոտ էր մեր սրտին, — գրում է նա, — իսկ հերոսը՝ ծանոթ: Վրացյանի կարծիքով դարձ կատարող հերոսի (Արտաշես Միրաքյան) նախակերպարը Գևորգ սարկավազ Չորեքչյանն է՝ հետագայում ամենայն հայրց կաթողիկոս: Այդ մասին գրելով վիպակն ընթերցելուց շատ տարիներ անց՝ Վրացյանը այնուհետև շփոթվել է և կերպարի զարգացմանը-տվել անհարիր բացատրություն: Տե՛ս Ս. Վրացյան, Անձինք նվիրյալք, Պելուս, 1969, էջ 146:

⁶ Կառաարին Լիսիցյան, Նվիրում, Երևան, 1982, էջ 51:

⁷ Էդվարդ Զրբաշյան, Թումանյանը և հայ գրականության ավանդույթները, Երևան, 1994, էջ 350—351:

քում իր այնքան ատելի երևույթը կրքոտ դատապարտելիս Շանթը մնացել է րեականության ու գեղարվեստականության շրջանակներում՝ ինքն էլ պնդելով, որ չնայած իր երկի «փոխմիակական գույն ստանալուն»՝ իրեն համար էականը եղել է երկի «գեղարվեստական ամբողջությունը, հոգեբանական վերլուծումը և անհատական տիպը»:

Խ. Գ. ՎԱՐԳԱՆՅԱՆ

1896, օգոստոս 25, Լայրցիկ

Միրելի՛ բարեկամս,

Այսչափ ժամանակ Ձեզի չի գրելիս և իմ շորս-հինգ նամակներու՝ Ձեզմե և ոչ իսկ տող մը պատասխան չստանալիս վերջը մարդ անսովոր համարձակություն ունենալու է Ձեզի կրկին գրելու համար. և այդ համարձակությունը ես մինչև այսօր չունեցա չի նայելով իմ վերջին ժամանակը ունեցած ամենանեղ հանգամանքներու: Եվ եթե այսօր գրիչ կը վերցնեմ Ձեզի նորեն գրելու համար, այն ալ այս տեսակ նյութի մը վրա, որ այս վայրկյանիս կարդաք պիտի, կրնաք երեակայեր, որ ինչ աստիճան սեղմված ու շվարած վիճակի մեջ եմ: Կարելի է այս նամակս ուրիշի մը վրա լավ տպավորութուն չընե, բայց դուք իմ աչքերուս դեմն եք միշտ այնպես, ինչպես ես Ձեզի ճանաչած եմ. և այդ ինձի սիրտ կու տա անկեղծորեն Ձեզի գրելու:

Ինչպես գիտեք մեկ-երկու ամիսեն երրորդ տարին կը լրանա, որ ես Գերմանիա եմ: Անցյալ տարվան Պոլսի աղմուկներեն² իվեր սկսան ինձի անկանոն ուշ-ուշ ու այն ալ քիչ ուղարկել ամսական անհրաժեշտ եղող փողը. ես առժամանակ մը կառավարվել սկսա շուրջս փոքր պարտքեր ընելով. և հիմա երբ արդեն բավական պարտքեր դիզված է վրաս՝ Պոլսեն կը գրեն ինձի, որ վերջնականապես հույսս հոնկե կտրեմ, որ արդի դրամական պայմաններուն ինձի այլևս ոչինչ ընել չեն կրնար: Ես առաջուց չափազանց անկանոն վիճակս աչքի առաջ ունենալով անցյալները արդեն գրած էի «Մուրճի» խմբագրին³, որ եթե կարող է ինձի քիչ-շատ կարող անձ մը ցույց տա, որուն ես դիմել կարողանամ կամ իբրև ստիփենտիատ* և կամ իբրև փոխ ստակ խընդրող՝ երկու տարիի մը դեռ ևս հոս աշխատությունս շարունակելու համար: Եվ ահա՛ երեկ Պոլսեն կ'ըստանամ վերը՝ հիշած նամակս և բոլորովին հաշիվս կը կորսնցնեմ. շորս կողմս լեցուն պարտք. ձեռքս ոչ մեկ ստակ. առանց հոս հաշիվներս մաքրելու տեղեկ չեմ կարող երերալ. կապված ամեն կողմի ալ ինձի խորհուրդ կու տան Պոլիս շվերադառնալ, ըսելով թե Պոլիս մտնելու ժամանակս ինձի կարող են կալանավորել, ինչպես ուրիշ շատ մը հայ երիտասարդներու հետ պատահած է. և կը մտածեմ՝ ենթադրելով, որ անվտանգ Պոլիս դառնալ կարողացա՝ ի՞նչ պիտի ընեմ հոն. ոչի՛նչ. այս պայմաններուս մեջ անգործ ու ապարդյուն ժամանակ անցընելու հարկադրված եմ. ո՛չ կարող եմ գրել, ո՛չ իմ Մանկավարժությանը զբաղվիլ. ա՛, այդ անգործության գաղափարը անտանելի է. հոս իմ աշխատություններս ընդհատեմ ճիշտ կեսին, ամենաէական կետին վրա, երբ ես ամենեն ավելի իմ գործովս հետաքրքրված եմ, և երթամ Պոլիս պարապ ժամանակ անցընելու՞. ո՛չ Պոլիս վերադառնալ կարող եմ, ո՛չ ալ արժե հիմա վերադառնալս. ո՛չ փող ունեմ, ո՛չ ստանալու հույս. իսկ հոս ես ամեն օր ավելի ու ավելի նեղ վիճակի մեջ կը մտնեմ. բոլորովին շվարած եմ. ի՞նչ ընելիքս ինքս ալ չգիտեմ. և ահա՛ այս վայրկյանիս էր, որ բոլոր մեկդի դնելով ստիպված եմ նորեն Ձեզի դառնալ: Կովկասի մեջ Ձեզմե ու պարոն Սպենդիարյանեն զատ⁴ ինձի ո՛չ ոք մո-

* Կրթաթոշակ ստացող:

տեն շի ճանչնար. և ո՛չ ոքին խորհուրդ հարցրնելու կարող չեմ: Արդոք շե՞ք կարող Կովկաս կամ Ռուսաստան Ձեզի ծանոթ անձի մը, ինծի իբրև ստիփենտիատ առաջարկել երկու տարվան համար. պատրաստ եմ այդ ստակը իբրև փոխ առած նկատել և վերադարձիս ամսե ամիս իմ աշխատութենես հատուցանել: Եթե Ձեզի համար անհաճո է անձամբ այդ տեսակ քայլ մը ինծի համար ընելը, գոնե գրեցե՞ք ինծի՝ ես ինքս որո՞ւ կարող եմ դիմել քիչ-շատ հավանական հույս ունենալով. միայն խնդրեմ ըստ կարելվույն շուտ պատասխանեցեք նամակիս. կարող եք երևակայել, թե ինչ հոգեկան վիճակի մեջ եմ: Ա՛խ, ներեցե՞ք ճշմարիտ Ձեզի տված այս ձանձրույթիս: Կամ գուցե կարող եք ուրիշ միջոց մը ինծի առաջարկել. Ձեր խորհուրդը շնորհակալությամբ լսելու պատրաստ եմ:

Կարոտով կը բարեւեմ Ձեր ընտանիքը ամբողջապես և մասնավորապես ու սիրով կը սեղմեմ Ձեր ձեռքը.

Առն Սեդրոսյան

Հասցես՝

Segbossian,
stad. Albert str. 26, III, Leipzig

1896, դեկտեմբեր 19, կայքցիկ

Սիրելի Լիսիցյան,

Մոտ երկու ամիս է Ձեզի նամակ մը գրած եմ. չգիտեմ ստացած եք, թե ոչ, քանի որ պարոն Սպենդիարյանի ըսելով այդ միջոցին քաղաքը չեք եղած. բայց համենայն դեպս պարոն Սպենդիարյանեն երևի իմացած կը լինեք նամակիս բովանդակութեան մասին:

Ան ինծի համար մեկ-երկու դիմումներ ըրած է արդեն. և անհաջող. և անոր խորհրդով ես ինքս դիմեցի տիկին Անանյանին. միայն անկեղծ ըսելով ոչինչ դրական հույս չունեմ. իսկ դրությունս օր օրի բառի բուն նշանակությամբ անտանելի կը դառնա:

Եվ իմ այս վիճակիս մեջ ես մտածեցի անմիջապես ձգեմ ու Թիֆլիս գամ. հոտ գործի մը ձեռք գարնեմ, մինչև տեսնենք հանգամանքները ինչ կը բերեն: Թեև իհարկե ինքս ալ չգիտեմ, թե Թիֆլիս քիչ-շատ ինծի հարմարող ինչ բանի կարող եմ աշխատիլ. բայց համենայն դեպս ինչ ալ որ լինի՝ այդ շատ ավելի լավ է, քան արդի պարտքերու տակ ճնշված, ձեռքս առանց ըստակի, հոգեկան այս անհանգիստ դրությունս: Եվ որ ամենակարևորն է ոչ ոքի վրա ծանրություն չեմ լինի գոնե:

Սակայն Եովկաս գալու համար իհարկե ստակի պիտք ունիմ. արդեն գրած եմ նամակ մը պարոն Սպենդիարյան այդ խնդիրքով. նամակ մը ևս պարոն Ս. Մալխասյանին⁵, որ իր հոս եղած ժամանակը խոստացավ ձեռքեն եկածին չափ ինծի համար աշխատի. և խնդրած եմ 300 ռուբլի — ըստ կարելվույն մինչև այս ամսու վերջը — կերպ մը ինծի համար հարել. մտածելով, որ այդ գումարը քիչ-քիչ հատուցանեմ իմ գալուս՝ հուսալով, որ անմիջապես աշխատանքի մը հարելու պիտի հաջողիմ:

Ինչպես պարոն Սպենդիարյանը կը գրե, ինքը ու դուք որոշեր եք ձեր շրջանին մեջը պարբերական կերպով գումար մը ժողվել ու ինծի ուղարկել: Եթե այդ մեկ կամ երկու անգամուս համար լիներ միայն, և եթե այդ միջոցին հույս ունենայի, որ ուրիշ կողմի իմ համալսարան մնալու ապահովվեր, ինծի կը մնա միայն սրտագին շնորհակալությամբ ընդունել ձեր այդ ընկե-



րական նվերը: Բայց ինչպես գրեցի, հույս չունիմ այդ հաջողութեան. պ. Սպենդիարյան հաջողած չէ. պարոն Մալխասյան ընկերներես մեկուն գրած նամակին մեջ հույս չի տար. իսկ տիկին Անանյանին գրածն իսկապես ոչինչ չեմ սպասեր. անծանոթ, հեռավոր տղու մը ուսումը շարունակելը կամ շարունակելը ինչ հետաքրքրություն կարող է ունենալ հարուստ տիկնոջ մը համար. մանավանդ մեր արդի պայմաններուն մեջ, երբ մարդ իր աչքին դեմ դժոխքն փախած ժողովրդի մը անոթությունն ու մերկությունը ունի: — Իսկ երկար ժամանակ ձեր ընկերական օգնության վրա հենվել ես չեմ ուզեր. իմ արդի երեսի վրա ինկած դրութեանս շափ ծանր է և այն գիտակցությունը, որ բարեկամներու ազնվութենն օգտվելով՝ անոնց վրա բեռ եմ եղած. և այն ալ, ինչպես ըսի, մեր ժողովրդի ներկա դրության մեջ, ուր իրական թշվառներու բանակ մը կա ձեր նվերներուն կարոտ: Իսկ ինձի, ազնի՛վ բարեկամս, միջոց տվե՛ք միայն իմ այս ներկա կաշկանդումես կերպ մը ազատվելու: Զեզմե ևս կը խնդրեմ այն, ինչ արդեն պարոն Սպենդիարյանին գրած եմ. որքան է կերպով 300 ռուբլի հասցնեք ձեռքս, որ ես կովկաս գալ կարողանամ և որքան կարելի է շուտ. ըստ կարելիւնն մինչև ամսուս վերջը. որչափ քաջբըշվի՛ այնչափ ավելի շատ ստակի անհրաժեշտություն կ'ունենամ հոսկե հեռուալ կարողանալու համար. տասնհինգ օր ուշ կամ կանուխ ահագին նշանակություն ունի:

Նույնիսկ ենթադրելով, որ այդ միջոցին որևէ հրաշքով կա՛մ դուք հաջողեցաք ուսումս շարունակելու կա՛մ իմ ըրած փորձս իրականանա, հազիվ թե մինչև հունվար ձեռքս ստակ հասնի. իսկ ես արդեն հիմա պարտքերու մեջ խեղդված եմ. այնպես որ այդ ձեզմե խնդրած 300 ռուբլիին համեմայն դեպս պետք ունիմ:

Ընդունեցե՛ք բարևներս, սիրելի Լիսիցյան, և ինչպես միշտ, ներող աչքով նայեցեք ձեր գլխացավանք աշակերտի տված ձանձրույթին:


Պատասխանեցեք ինձի խնդրեմ և շո՛ւտ.

Հարգանքներս տիկնոջ.

Կը սեղմեմ ձեռքերնիդ

Լևոն Սեդրոսյան

Հ. Գ. Նամակս եթե կամենաք ցույց տվե՛ք և պարոն Սպենդիարյանին. տվե՛ք անոր և իմ սրտագին բարևս:



Լևոն

Հասցես. Segbossian,
stad. Albert str. 26, III, Leipzig

1897, ապրիլ 3, Բաստով

Սիրելի՛ Ստեփան,

Կես ժամեն ճամբա կելնեմ դեպի Խարկով. Բաստովի կայարանը նստած քեզի ու ձերոնց քանի մը տող գրելու կ'ըշտապեմ: Ծայրեն սկսեմ: Ռազմավիրական ճանապարհը շատ լավ ու հանգիստ անցա. օրը տաք էր բառի բուն նշանակութեամբ. նույն իսկ ձյուններուն մեջն անգամ. ո՛չ իսկ օդի շարժում մը Դարիալեն ելնելու ժամանակ. միայն կծու հով մը սկսավ գրեթե մինչև Վլադիկավկաս, բայց ես տիկնոջ ու քու խորհրդիդ բառացի կերպով հետևած էի և երևակայե՛ հինգ շապիկ էի հագած իրարու վրա, այնպես որ այդ *bise*-ն ալ բացի դեմքս փառավորապես խաշելեն ո՛չ վնաս տվավ ինձի, ո՛չ օգուտ:

Մլեթեն սկսած, քանի լեռան բարձրերն էինք, դժբախտաբար շուրջս ամբողջապես ծածկված էր մառախուղով. Կազբեկ իջնելու ատեն հետզհետե սկսավ բացվել. իսկ Կազբեկեն մինչև Դարիալին ելնելնիս հիանալի պայծառ ու արև օր էր.— իմ վրա խոր տպավորութուն ըրավ այդ վայրի Դարիալը. այդ Չերքեզուհու շաղրայով փաթթըված սիրունիկ Կազբեկը, որ լեռներու մեջքեն քոքեթությամբ վար կը նայի. բայց բանաստեղծությունը մեկդի. հիմա զանգը կու տան, և ես բավական բան ունիմ դեռ գրելու: Այնքանը միայն շմուռնամ ըսելու, որ կառքի թաքթավոր ցնցումին տակ մեկ անգամ մը չէր, որ հիշողություններս ետ-ետ դեպի ձեր տունը վազեցին. ա՛, եթե գիտնաս ի՞նչպես սիրով կը բարեկեմ ձեզի բոլորդ:

Վլադիկավկաս գիշեր մը մնացի. թե՛ իրիկունը, թե՛ հաջորդ օրը, լավ մը թափառեր եմ քաղաքը. բոլորովին միայն. այդ է ձանձրալին: Գնացքին մեջ մինչև Րաստով ամբողջ հատորիկ մը կարդացեր եմ Чехов-ի рассказы-ները:— Երեկ առավոտ մտա Րաստով, առաջին տպավորությունս այդ դաշտին մեջ ընդարձակ փռված Դոնը եղավ. այդպես լայն գետ դեռ տեսած չէի, որով կրնաս հասկնար, որ վրաս ազդեր պիտի: Հյուրանոցեն անմիջապես Տիկնոջ հանձնարարականներուն ետևեն ինկած: Նախ Լեոն վարդապետի իրերը հանձնեցի Անանովին, որ իսկը նախիջևանցու տիպ է. ծանոթացուց ինձի կնոջը և հյուրասիրեց. իրերու համար շատ ուրախացավ. «քույրերուն կը տանեմ» ըսավ. ուզեց հասցեդ. տվի: Հոնկե ձիաքարը և շիտակ նախիջևան. սոսկալի հով քամի օր մը. քիչ մը այս ու այն կողմ իյնալի վերջը Գոգոյան վարժարանը գտա. ընդունեց ինձի. նամակները հանձնեցի. հարցուց ձեր մասին, մասնավորապես տիկնոջ: Գտա Զարիֆյանը? Վա՛հ, վա՛հ այդ նոր տերտերները. ինձի համար այնպես տարօրինակ է տեսնել ընկերիդ այդ երկար վերարկուներուն մեջ փաթթըված, համրիչը ձեռքը, բոլոր սենյակներուն մեջ մեկ-մեկ երեխա. «Հայրիկ. հայրի՛կ» «մամա՛»: Նորեն Զարիֆյանը չի թողուց. Զարիֆյանի տիկինն ալ հարցուց քնիներուդ մասին, մասնավորապես տիկին Քազուհու, որու բարեկենը անոր տարած էի. և բավական բաներ պատմեց ինձի տիկինը քու քնի տիկնանցը մասին դպրոցեն: Հա՛ վերջապես իրիկունը հետզհետե տեսա մյուս տղաքը, որոնք բավական բազմաթիվ են. հա՛, Սուրբ խաչ ալ գացի անմիջապես⁸. հիանալի այն սիրուն իրիկուն էր. դաշտերուն մեջեն վրաս շատ լավ տպավորութուն ըրավ. նույնպես այդ վանքը իր բոլոր կողմերով. հոն ալ մեկ-երկու ճեմարանցի ընկերներու հանդիպեցա. ամեն մինի ետևեն մեկը կը բուսնի. ամեն տեղ կան. մեկ խոսքով նոր տպավորություններով բեռնավորված դարձա քաղաք, գիշերը տղոց հետ էի. հիմա անոնք գործ ունին. բոլորն ալ կամ վարդապետ կամ տերտեր⁹. այս առավոտ քաղաքին մեջ՝ Րաստով թափոր մը ըրի ու հիմա հայտնի աղմուկին մեջ նրստեր կը գրեմ: Տիկնոջ ըսած երթալը դժբախտաբար անկարելի եղավ. շա՛տ կը ցավիմ, որովհետև տիկինը քանի մը անգամ իր այդ ցանկությունը կրկներ էր ինձի. մեղք: Մ՛հ, դպրոցն ալ եղա, եկեղեցին ալ. ձեր նախիջևանը վրաս լավ ազդեց. սիրուն, մաքուր, կոկիկ քաղաք մըն է. «հանգիստ անկյուն մը». իսկ Րաստովը եվրոպական քաղաք է արդեն:

Կ՛ըլտապեմ վերջացնելու: Սիրով ու կարոտագին կը բարեկեմ մայրիկը, տիկինը, տիկին ու օրիորդ քենիներդ բոլորը. կը սեղմեմ բոլորիդ ձեռքը. ու քեզի ալ պինդ կը համբուրեմ:

Սիրելի՛ս Ստեփան,

Որ նամակ գրեցու մեջ առաջին կարգի ծուլներեն ես, որ շատ ուշ-ուշ պիտի գրեիր ինձի, որ երկար նամակներ երբեք պիտի չգրեիր, այս բոլորը ես իհարկե գիտեի. բայց որ քու նամակներու չպատասխանելու սկզբունքդ ա՛յս աստիճան կատարելագործութեան պիտի հասցնեիր, ո՛չ, այդ չէի կրնար երեւակայել: Եղբա՛յր, գոնե քարթ մը, գոնե երկու տող. գոնե իմանամ, որ իմ գրածներս ու ղրկածները ստացեր ես, այս տասնհինգ օր է ամեն առտու քեզմե նամակ առնելու հույսով գրաբերին կսպասեմ. նամա՛կ և փո՛ղ: Ըսենք հիմա քու բազմաթիվ պաշտոններուդ վրա երկուսն ալ ավելցած է՝ դերասանականը ու ձայնավորականը¹⁰, բայց այդ շի նշանակեիր, որ Մյունխենն ինկած բարեկամիդ նամակը և փողը ուղարկելու մոռնաս: Իսկ ինչ կը վերաբերի քո նոր պաշտոններուդ, իմ կարծիքս արդեն գիտես. մեկ կողմեն իհարկե ուրախ եմ. հասարակութեան մեջ գրաված դիրքիդ նշանն է այդ, և անունիդ պատիվ մը, որ՝ ի՞նչ հարկ կա ծածկելու, բոլոր քեզի սիրողներուն համար հաճելի է. սակայն այս գործի այսպես ըսած տեսական երեսն է. գալով գործնականին՝ ես չափազանց դժգոհ եմ եղեր և իմ այդ քու բազմակողմանի ու բարդ անդամութուններեդ, որոնք բոլորն ալ ձրի են, շատ ժամանակ կը պահանջեն և ուր, դժբախտաբար, արդունք մըն ալ հազիվ կրնա առաջ բերել: Գիտե՛մ գիտե՛մ քու պատասխաններդ և վիճելու ամենևին տրամադիր չեմ, միայն, եթե լրագիրը քու նոր պաշտոնիդ լուրը ինձի կը բերե՛ն՝ ես միշտ կը բարկանամ. այդ գիտցած եղի՛ր:

Հա՛, դառնամ նորեն ինձի. ես միշտ հույս ունիմ, որ այս քանի մը օրը Ծտիկարյանի գոնե երկու ամսականը կ'ըստանամ¹¹ քեզմե. իսկ հաջորդ երկու ամսականը (հուլիս-օգոստոս) եթե հնար է, սիրելի՛ս, այնպես ըրե, որ եվրոպական հաշվով օգոստոսի սկզբին ձեռքս հասնի: Գիտավորութունս պարզ է քեզի, ամառվան արձակուրդեն օգտվել կուզեմ. պարոն Ծտիկարյանի համար իհարկե նույնն է քանի մը օր ուշ կամ կանուխ ուղարկելը. իսկ ես առանց ստակի տեղես երբեք չեմ կրնար: Մտադիր եմ Զվիցցերիա անցնելու. բավական է ըսեմ, որ Օննիկը ժնև է հիմա¹²:

Զոհրաբյանեն¹³ չափազանց շնորհակալ եմ. կատարյալ կանոնավորութեամբ կստանամ. թե չէ մինչև հիմա ինձմե տասը բողոքագիր ստացած կը լինեիր: Միայն գիտցած եղիր, հաշիվներս ծայրը ծայրին են հասած. եթե մինչև 8—10 օր քեզմե նորեն ստակ չառնեմ՝ գործս գեշ է. բանքո՛ւտ. և ալ նամակներուս ուժակոծութենեն՝ չես ազատիր. գուցե միայն եթե ձգես և իսկույն ամարանոց փախչես:

Ի՞նչպես է տունդ. ինչ կ'ընեն Տիկի՞նը, օրիորդնե՞րը. բոլորին սիրով ու կարոտով բարևս. է՛, ինձի խոստացաք ձեր լուսանկարները, և սպասե՛, որ ստանաս. շա՛տ շուտով մոռցաք: Լեոնիկին ու Սուրբիկին համբույրս:

Նամակ մը գրած եմ քեզի Բաստովեն¹⁴, քարթ մը ճանապարհեն¹⁵. նամակ մը և քարթ մը հոսկե¹⁶. երկու փաթույթ ալ բորշյուրներ. կը հուսամ, որ ստացած ես: Հուսա՛լ:

Հիմա արդեն նոր սկսա կամաց-կամաց Թիֆլիսը տեսակ մը կարոտել. և հետս բերած տպավորութիւններս վերլուծել:

Գալով աշխատութիւններուս, լավ է. գլխավորապես կեդրոնացած եմ գրականութեան և քաղաքակրթութեան պատմութեան վրա. արդեն ամառվան կիսամյակը շատ փոքր է. ամիսե մը դասերը կը դադրին. իսկ Բավարիա ալ անհատնում տոներ կան. կաթոլիկներ են: Մյունխենն գոհ եմ. ձմեռը հոս կմնամ ըստ երեւոյթին: — Վեպիս¹⁷ արտագրութիւնը շուտով կը վերջանա և

կուղարկեմ «Մուրճին»։ Երևի օգոստոսի համարին մեջ կը տպագրվի սկիզբը։
Կը վերջացնեմ. կրկնելով նամակ, նամակ, նամակ և փող, իհարկե, ինք-
նին հասկանալի է.

Ընդունե՛ համբույրներս

Լևոնդ

1897, հուլիս 28, Մյունխեն

Սիրելի՛ս Ստեփան,

Անդրանիկ նամակդ առած եմ. և շես կրնար երևակայեր, թե ինչպես ե-
րեխայի պես ուրախացեր եմ։ Զափազանց ուրախ եմ ամարանոց գալերնուտ.
սրտանց կը ցանկամ ձեզի բողոքի՞դ զվարթ օրեր բնության գիրկը. և թար-
մություն ուժերուդ, երբ քաղաք դառնաս. քի՛չ, քի՛չ աշխատե՛, հոգի՛ս. կա-
րելիին շափ քիչ. հավտա՛ ինձի, որ բացառիկ կերպով մտավոր շատ աշխա-
տանք ունեցողներեն ես դուն. և այդ երբեք օգուտ չէ։ Ի՞նչ կ'ընեն պզտիկ-
ներդ, օրիորդները, տիկիները. սրտագին բարևս բողոքիդ. է՛, ինձի խոստա-
ցաք լուսանկարներ ուղարկել՝ ո՞ւր մնաց։

Այդ քու Ալեքսանդր Մակեդոնացու պատմության¹⁸ պատմությունը իրեն՝
Ալեքսանդր Մակեդոնացու պատմութենեն ավելի երկար եղավ. և նամակս
այսչափ ուշացրնելուս պատճառն ալ այն է. կրնաս նե գտի՛ր. Մյունխեն այդ
կողմեն շա՛տ ձախորդ քաղաք է. ո՞ւր է Լայբցիկը. հոս ձեռքի տակ անթիք-
վարիչ* այդ գիրքը չի կա. «Պետք է սպասել մինչև պատահի». կ'ըսեն ինձի
հոստեղի սակավաթիվ գրավաճառները. իսկ դուն ամառը ունենալ կ'ուզես։
Draysen-ի Ալեքսանդրի պատմությունը երկու տեսակ կա. մեկը Gesch. d.
Hellenismus երեք խոշոր մասերե բաղկացած ընդարձակ աշխատության ա-
ռաջին մասն է (երկու հատոր, նորը 14 մարկ) և քու ուզածը այս է. կա և
հռակե կազմած համառոտ մը աշակերտներու ընթերցանության համար (5
մարկ). ես անգամ մը մտածեցի գուցե այդ համառոտը այս ամառ ձեռքդ
հասցընեմ, կարելի է աշակերտիդ համար է. վերջը ետ կեցա. հինգ մարկ
տամ, վրայեն ալ հանդիմանությունդ լսեմ, չե՛, այդ հաշվիս չի գար։ Այդ
համառոտ ըսածս նորեն պատկառելի հատոր մըն է (մեկի քառորդը, կամ եր-
րորդը գուցե) քարտեզներով։ Եթե մեկը կ'ուզես ունենալ՝ վերջապես կերպ
մը ուշ կամ կանուխ ձեռք կը բերեմ իհարկե. դժբախտաբար ո՛չ արձակուր-
դիդ։

Իմ Զվիցերի երթալուս խնդիրը ինձի շատ կը նեղե. իմ կողմես վճուված
հարց է. բայց իմ վճռես ի՞նչ կ'ելնե. բանն է, որ Ծտիկարյանեն մինչև հիմա
դեռ ոչինչ չեմ ստացած. և չգիտեմ ալ, թե երբ պիտի ստանամ. ա՛հ, եթե
կարողանայիր այս անկանոնությունը կերպ մը կարգի ձգելիր. ո՛չ միայն
հիմա, այլև միշտ այդպես կը լինի՝ ես գիտեմ. ամենապետք եղած ժամանա-
կը չեմ ստանար. և երբ ստակը կու գա արդեն բանը բանեն անցած է։ Ու-
րիշ վիճակ է բողոքովին, եթե մարդ ե՞րբ և ի՞նչ ստանալիքը առաջվնե գիտե.
ինչևէ, գլուխդ չի ցավցընեմ, մեղք ես. ամարանոցի մեջ այս հաշիվները քիչ
մը անտանելի են, իրավունք ունիս. միայն երբ քաղաք դառնաս, այս տողե-
րը անգամ մը նորեն կարդա։ Սակայն եթե չհաջողցընեմ այս ամառ Օննի-
կիս¹⁹ երթալու... շգիտեմ ինչ ընեմ. և այն ալ հիմար անկանոնության պատ-

* Ի նկատի ունի հնագրավաճառներին։

ճառով. որ կը մտածեմ՝ կատղելս կու գա: Օննիկը հոն ինչպես կ'երևի մեծ գործի վրա է. իր հասցեն է. Snisse, Geneve, Y. Sissagian, 26, Koserau.

«Վերծինը» ոչ միայն իր արգանդային վիճակը անցուցած է, այլև արդեն շատոնց ծնված, մկրտված ու կնքված է: Եվ երբ այս տողերս կը կարդաս, ան երևի կյանքի ծանրութեան ու հարվածներուն տակ կը տքա մամուլի ու մոր ճնշման ենթարկված: Ինչ ըսել կ'ուզե, քու կարծիքդ կ'ուզեմ մանավանդ վերջին 4 գլուխներու համար²⁰, որոնք բոլորովին նոր են, որ առաջվրնե անհամեմատ ավելի լավ է՝ ես ինքս ալ գիտեմ, գիտեմ նաև, որ այդպիսով Վերծին իր բնավորութեան վրա բավական բան չհասցրած և այդ կողմեն քեզի երախտասպարտ է: Ես հիմա սկսած եմ նոր գործի²¹. դեռ [եղևու բառ անընթեռնելի] մեջն եմ ու խճճված. երբ թիվերը վերջնականապես իրարմե զատեմ ու գրելու սկսեմ՝ մեկ-երկու տողով կը հայտնեմ քեզի էությունը. այժմ ա՛յսքանը. ուսանողական կյանքն է և կովկասյան դեմքեր, Կովկասե՛ն բերված, այսպես ըսված, լրջութունը, (միակողմանի ու սխալ հասկցված) և հոս առաջացած բակցիոնը դրա դեմ, արդեն կրնաս երևակայեր, թե ի՞նչ հարցի շուրջ կը պտտի ուղեղս:

Գե՛, սիրելի՛ս, համբույր.

Գրե՛,

Լևոն Սեդրոսյան

1897, նոյեմբեր 18, Մյունխեն

Անգին Ստեփանս,

Նամակիդ պատասխանելու համար՝ հանեցի նորեն կարդացի և ինչպես նախորդ երկու-երեք ընթերցումներուս ատեն՝ այս անգամ ալ վրաս նորեն ջերմ տպավորություն ըրավ. իսկ առաջին անգամ ուրախութենես ուղղակի ինչ ընելս չգիտեի: Գրե՛, Ստեփա՛ն, ինձի. թող լինի ուշ-ուշ, բայց գրե՛ մեջմեջ. հոգիս մինակ է, բոլորովին մինակ. մինչ ես ծարավ եմ զզացումներու, տպավորություններու հաղորդակցության. ընկեր մը, որ ինձի հասկնա, որ բացվի ինձի. ցավը, հոգնությունն ու հույսերը հասկընամ: Ինքս կտրրված եմ կյանքն, այսինքն այն շրջանն, որ ինձի հետաքրքրել կրնա, որուն մեջ ես հարմարեմ, որուն մեկ կտորը լինեմ ես և մեկ գործող կտորը: Զգիտես ինչպես հասարակության, ժողովուրդի շրջ[ան]ի մեջ լինել կը ցանկամ, այսինքն մե՛ր ժողովուրդի. և ինչպես գործ մը տեսնելու, շարժման մեջ լինելու, ներգործական դեր մը խաղալու պապակը կայրե սիրտս. ա՛, երբեմն ուղղակի անտանելի է այս միայնակ, միակերպ կրավորական ընթերցումը. այս անվերջ պատրաստվելը, յուրացումը. գուցե կյանքիս կեսը անցած եմ արդեն և դեռ կը պատրաստվիմ. ա՛, անկարելի է չծիծաղել: Հա՛, գլխուդ երեմիական չի կարդում, որ մարդ ամեն տեղ և ամեն ժամանակ տրտնջա պիտի, այդ հին երգ է. կ'ուզես. քեզի առած մըն ալ շինեմ, L' homine c'est animal mécontent:

Քեզի ավելի իմ զբաղումներս կը հետաքրքրե՝ այդ մասին գրեմ: Նախ ըսեմ, որ Շվեյցարիա երթալս ջուրը ինկավ. շատ կը ցանկայի ու բավական կտրրված եմ. խեղճ Օննիկս դեռ կ'ըսպասե: Գարնան բոլորովին կ'անցնիմ Ֆրանսայն, Շվեյցարիա, հոնկե ալ վերջը հավանորեն Ֆրանսա անցնելու համար: Ամառը բավական պարապ անցավ: Գլխավոր աշխատությունս էր և է. քաղաքակրթության պատմություն և գրական պատմություն. այլև նորագույն գեղեցիկներու ընթերցում. բայց արդեն կշտացա. ա՛խ, այն-

քան, այնքան քիչ շնորհքով բան կա. բոլորն ալ երիտասարդ, խարխափող ուժեր. մեկ մասը հիվանդոտ, մյուսը անգեղարվեստական: Ձմեռվան աշխատությանս ծրագիրը նույն է. կ'ավելանա գեղարվեստի (Kunst) պատմություն և նորվեկյան գրականություն. բայց այդ նորվեկներն ալ չսիրեցի. տեսակ մը ախտավոր, մռայլ, բևեռային մթնոլորտ. ձմեռը անգլերեն սովորելու եմ. կարծեմ անգլիական գրականությունը, ֆրանսիականի ու հարավայինի հետ սրտիս ավելի մոտիկ պիտի գա. մինչև հիմա իմ ճանչցած գրականություններես ամենեն ավելի ուսականը իմ սրտին խոսած է. չգիտեմ գուցե պատանեկան տպավորություններ կապված են հետը անոր համար. կամ գուցե մեր կյանքին ավելի նման է. չգիտեմ. բայց իմ Լեոմոնտովն ու Թուրգենևը ո՛չ Ջուտերմանի²² հետ կը փոխեմ ո՛չ ալ Ստրինտրերկի²³: Ահա՛ որն է ծրագիրս, և ինչպես կրնաս տեսներ ամենեկին ընկերական գիտություններու կողմը ծոված չեմ. թեև դեռ հարց է, արդյոք ավելի լավ չէ՞ր լինի եթե ծոած լինեի. օրական երկու ժամ քաղաքատնտեսություն պիտի լսեմ միայն իբրև հասարակական գիտություն. առայժմ. դասախոսությունները առաջիկա շաբթեկ կ'ըսկսի. դասախոսություններ քիչ ունեմ. շատ լսելը ոչ մի՛ օգուտ չունի. միջին հաշվով օրական չորս ժամ. 4—5 ժամ ալ կը կարդամ. ահա բոլորը:

Իսկ ինչ հալի է Շանթը, պիտի հարցնես. գոնե այդ հարցիդ ուրախ պատասխան մը տալ կրնամ. ամառը տեղս գամած մնալես ան միայն օգտվեցա. գրած եմ վեպ մը («Դարձ»)՝²⁴. երեք տիպ մեր նոր երիտասարդ ուսումնական հոգևորականներն. ավելի ճիշտ հոգևորականացուններն. սարկավագացուի մը դարձը դեպի ետ՝ հակառակ մտածող ընտանիքի մը և մանկաբարձ աղջրկա մը ազդեցության տակ: Հա՛, իմ կրոնական հայացքներս գիտես, գիտես և կրոնավորներու ատելությունս, զզվանքս դեպի վանքը և այն բոլորը որ վանքին հետ կապված է. իհարկե, այդ բոլորը վեպիս վրա պիտի անդրադառնա. սակայն ըսելս ալ ավելորդ է, որ տենդենցիայի համար աղավաղումներ, անճշտություններ և այլն, ո՛չ իսկ չափազանցություններ ընելու տրամադիր եմ. իմ նպատակս ըստ կարելիության այդ երիտասարդ երկու-երեք տիպերը պարզ դուրս բերելս է եղած և իմ համոզումներու փրփագանդան. բեմը եծկոնքի վանքը. անշուշտ գրվածքը քիչ մը փոխմիկական գույն ստանալու է, բայց պարզ է, որ ինձի համար գեղարվեստական ամբողջությունը, հոգեբանական վերլուծումը և անհատական տիպը (ոչ afrou[?] ստվեր մը) ամենաէականն է. թե որքան հաջողած եմ՝ այդ տաղանդի խնդիր է. հիմա ինկած է գզրոցիս մեջ, մեկ-երկու ամիսեն կը հանեմ նորեն դուրս կը սըրբագրեմ, կը շտկեմ և կ'ուղարկեմ տպագրության. մտադիր եմ նորեն «Մուրճի» մեջ տպելու, թեև Արասխանյանին ոչ մի բառ գրած չեմ այդ վեպի մասին. պատճառը պարզ է. նախ կրոնական և այլ մեկ-երկու կետեր կան, որ հրատարակչականի անդամներուն կրնա քիչ մը շոքե ըներ, նաև իբրև առանձին գիրք ցենզուրական ավելի խիստ հայացքի կ'ենթարկվի. իբրև ամսագրի հոդված (այն ալ վեպ) շատ բանի վրա (մանավանդ երկրորդական տողերու) մեծ ուշադրություն չի դարձվիր. իսկ ես չէի ցանկար, որ ոչինչ կըրճատվեր. և վերջապես ամբողջ երկը փոքր բան մըն է («Դուրսեցիներու» կեսին չափ)²⁵. գուցե զարմանաս, որ ինչպես հանկարծ այդ չոր ու իմ ժանրս չի համարվող նյութին վրա ինկա²⁶. ինձի ալ այդ շատ որոշ չէ. ըստ երևույթին հին տպավորություններ մեջս դիզված էին, որոնք վերջին կովկաս գալես ավելի գրգռված դուրս հորդեցին²⁷. գիտեմ, որ կրնա գուցե քաջշուքի նյութ դառնալ, բայց որո՞ւ հոգ. իմ գործս գրելն է. մնացածը շատ երկրորդական է ինձի համար: Հիմա ինձի կ'ըզբաղեցնե ուրիշ վեպ մը, նյութ, կազմություն, հատակագիծ պատրաստ է արդեն. ինձի համար գործի ամենադժվար մասը կը մնա գրելը. վաղը-մյուս օր երևի կ'անցնի գրչիս տակ. նյութը սիրուն է

ու գեղարվեստական. կը կարծեմ, որ սիրուն բան մը պիտի դուրս գա. գրողը մոր կը նմանի. երեխա մը ունենալու գաղափարը հերիք է արդեն իր ունենալիք երեխան սիրուն գտնելու և վրան սիրահարվելու համար, բայց ինչ կ'ուզես ըսես. ես հավատացած եմ, որ դուն ալ պիտի հավնիս, երբ աշխատությունս գրած պատրաստ հոդ կարմիր սեղանիդ վրա դրված լինի. իսկ այդ մեծ եղելությունը (Ereigniss) երևի գալ տարվա վերջերը պիտի կատարվի. վեպիս բեմը Պոլսի մեկ անկյունն է, Ֆոնը՝ ծովը. վերնագիրը հավանորեն «Դեբրասանուհին»²⁸. իր արվեստին հետևել կարենալու համար իր առաջին ճշմարիտ սերը զոհ բերելու մաքառումը աղջկան մը սրտին մեջ. մյուս գրվածքը դեմքերն են՝ աղջիկ մը գավառն՝ անբույն մը. արցունքի ու զրկանքի համար ստեղծված ժողովրդի մը մեկ զավակը և անոր միամիտ ու վախկոտ մեկ անուրջը երջանիկ լինելու և երկու տղու դեմք. գիտնական մը (բնախոս). գիտնական համալսարանի դոցենտ մը. հայ իհարկե:

Թուրքահայաստանի արդի պրկումներուն մեկ ներկայացուցիչը՝ կարմիր մը. անշուշտ այնքան միայն, որքան որ մեկ կողմեն կրնա [1 բառ] շրջանակին մեջ սղմիլ, մյուս կողմեն գրաքննիչի [1 բառ] շրջանակին. է՛, որ այս բոլոր գրածես իսկապես ոչ մեկ գաղափար կազմելու չես, այդ ես քեզմե առաջ գիտեմ. ի՞նչ ընեմ. եթե ավելի որոշ գաղափար կազմել կ'ուզես տարի մը պիտի համբերես: Այդ վեպս փուկինն է. կ'ուղղարկեմ քեզի՝ ըրես ինչ որ կ'ուզես. և այս խոստումս ինծի համար այն առավելությունը ունի, որ գրելու միջոցիս ոգևորող նոր խթան մը ավելի կ'ունենամ, ըստ կարելվույն աղվոր բան մը քեզի նվիրելու:

Դե՛, այս գոյություն շունեցող ընծա ս ձեռքդ հասցնելես վերջը քիչ մըն ալ քու մասին: Չգիտես որչափ ուրախացա կարդալով, որ ամառը աշակերտ չես ունեցած. բառի բուն նշանակությամբ կարծես իմ վրայես բան մը թեթևացվ²⁹. չես կրնար երևակայեր, թե հոգուս ինչ ճնշող տպավորության եմ զգացած ամեն անգամ, երբ քու՝ հաստ գլուխ տղու մը հետ ժամերով առանձնացած՝ քեզի համար ոչ մեկ հետաքրքրություն չունեցող հարցերով ըզբաղվելուդ ներկա եմ եղած. և լսած եմ միշտ մտածելով, որ քու ընելիքդ ինքդ ավելի լավ կ'իմանաս և երևի նյութական անհրաժեշտություն մը քեզի կ'ըստիպես: Կը ցանկանամ, բոլոր սրտովս կը ցանկանամ, որ այդ ուժերուդ ավելորդ վատնումեն ըստ կարելվույն ամառ-ձմեռ ազատվես: Չայնավոր ընտրվելուդ³⁰ հաշտված եմ արդեն. և եթե իրավ առօրյա զբաղումներեդ ցրվելու և հասարակական դեմքերու հետ շփումն ունենալու առիթը պիտի տա քեզի՝ այն ատեն մինչև անգամ կը շնորհավորեմ նոր պաշտոնդ և հաջողություն կը մաղթեմ ձիշտ գլխուն ես զարկեր. ինչ որ քեզի կը պակսի. ցրվում և շփում: Եթե այդ երկուքին միացնենք «ավելի լայն գործունեության մը փափագը» կը կազմելի երրորդություն մը, որը ձեռք բերելու համար իհարկե կարժե քաղաքային վարչության մեջ ձայն մը ունենալու մեծ զոհաբերությունը: Քեզի ես շատ լավ կը հասկընամ. այդ երեքեն մասնավորապես վերջին երկուքը իմ սիրտս ալ կրծող որդերեն են. արդեն այսօրվան նամակս հոտկե սկսեցի. ինչ գրեցի շիտակը չգիտեմ, բայց բառերը եթե վերցընես՝ տակը նույն իմաստը պիտի գտնես: Թարգմանությանդ ավարտելդ ալ կը շնորհավորեմ³¹. կը մնա որ տպվածը ստանամ: Եվ հաջողություն կը ցանկամ Աբովյանիդ ու Ալ. Մակեդոնացուդ³²: Ա՛խ... այդ Աղեկսանդր Մակեդոնացին քու խերդ անիծեց, դուն իմ, ես ալ գրավաճառներու. և նամակս այսչափ ուշացնելուս գլխավոր պատճառն ալ այն է. անպատճառ կ'ուզեի քեզի դրական պատասխան մը գրեմ. անկարելի եղավ. գրավաճառիս երեք անգամ իրենց ընդհանուր առևտրական թերթին մեջ ազդարարել տվի, բայց որչափ ալ որ սպասեցի՝ ահագին Գերմանիայի ոչ մեկ անկյունեն ձայն մը չեղավ.

ուրիշ գրքի առթիվ տասնյակներով կը թափեն օքերտները. ես այլևս անթիք-վար գնելի հուսահատած՝ վճռեցի նորը գնեմ և ուղարկեմ. քանի մը մարկի համար այսչափ սպասելը չարժեք. բայց վճարը հերիք չէ. փող ունենալու է: Իսկ ես քանի շաբաթե իվեր ձեռքս բնավ ստակ չունիմ. շուտով կ'ըստանամ Վարշավայեն և անմիջապես գիրքդ կ'ուղարկեմ: Իմ դրամական վիճակս, սիրելի՛ս, բնավ նախանձելի չէ. Թիֆլիսեն մեկնելուս այն ուրախությունը ունեի, որ նախորդ տարիներուն պես քիթը քիթին ապրելու ստիպված պիտի չլինեի, սակայն դժբախտաբար կատարելապես նույն վիճակի մեջն եմ: Տարի մը, տարիուկես ժամանակ ունեմ դրամին շուրջես օգտվելու և այս գեղարվեստական հարմարությունները ուրիշ ոչ մեկ տեղ ունենալ չեմ կրնար. այս գիտակցությունը ավելի ծանր կը դառնա, երբ ստակի պակասության համար ստիպված կը լինեմ սենյակս նստելու փոխանակ ավելի օգտակար կերպով ժամանակէս շահվելու. ճշմարտությունը այն է, որ միջին հաշվով ամսական 45 ռուբլ կ'ըստանամ, փոխանակ անվանական 60-ի. Թումանյանեն⁸² դեռ ոչինչ ստացած չեմ հոս գալես իվեր. իսկ Ծտիկարյանեն ընդամենը 30 ռուբլի. Հա՛, Ծտիկարյանի խնդիրը երևի կը կանոնավորվի, բայց Թումանյանի խոստումը ըստ երևույթին չուրը իյնալու է. եթե նախազգացումըս իրականանա, գիտցած եղիր նորեն քու օձիքդ բռնելու եմ: Եվ, է՛, վերջապես ետքի կանոնավորվելը ի՞նչ ընեմ, երբ ամիսներով ես հոս առանց ստակի նստած եմ, երբ ազատ քայլ մը ընել չեմ կրնար. ենթադրելով որ այս ամիս (հոկ.— նոյ.) Ձոհրաբյանեն և Ծտիկարյանեն փող ստանամ, ի՞նչ պիտի ընեմ ամբողջ դեկտեմբեր ամիսը, եթե Թումանյանի 6 ամսականը չըստանամ, և հավանորեն չեմ ստանար: Է՛, բավ է ավուրն շար յուր: Հա՛, միթե չեմ գրած քեզի, որ իշխանուհիի⁸³ կողմեն ուղարկած 60 ռուբլին իր ժամանակին ստացած եմ, իմ սրտագին շնորհակալությունս ու հարգանքներս կը հայտնես իշխանուհիին. իսկ քեզի ո՛չ շնորհակալություն կը հայտնեմ, ո՛չ հարգանքներս, այլ պինդ մը կը համբուրեմ շրթունքներդ.

Լևոն

Բարև Տիկնոջդ, մայրիկին, քենիներուդ: Դուն ու օրիորդ Եղիսաբեթը ձեր լուսանկարները խոստացաք ինձի. ո՞ր է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ ...իմ չորս-հինգ ճամակներուս. — ՀՀՊԳԱ Լիսիցյանների ֆոնդում այդ նամակները բացակայում են:

² Անցյալ տարվան Պոլսի ազմուկներեն... — Ի նկատի ունի 1895-ի սեպտեմբեր 30-ին հնչակյանների կազմակերպած Բարը Ալիի ցույցը և դրա հետ կապված եղելությունները:

³ ...արդեն գրած էի «Մուրեի» խմբագրին. — «Մուրե» հասարակական, քաղաքական, գրական ամսագիրը լույս է տեսել 1889—1907 թթ., Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչ՝ Ավետիք Արասխանյան:

⁴ Ձեզմե ու պարոն Սպենդիարյանեն զատ... — Խոսքը վերաբերում է ականավոր կոմպոզիտորի եղբոր որդուն՝ Իվան Սպենդիարյանին, որը դեռ տարիներ առաջ Լիսիցյանի խնդրանքով ստորագրությամբ 250 ռ. դրամ է հանգանակում՝ Գևորգյան ճեմարանից հեռացած Լ. Սեդրոսյան-Շանթին և Օննիկ Դերձակյանին օգնելու նպատակով (այս Լասին տե՛ս Կատարինե Լիսիցյան, Նվիրում, Եր., 1982, էջ 43):

⁵ ...ճամակ մը ես պարոն Ս. Մալխասյանին, — Խոսքը ականավոր հայագետ, ակադեմիկոս Ստեփան Մալխասյանցի մասին է:

⁶ տիկնոջ հանձնարարակներուն ետևեն ինկա. — Ստ. Լիսիցյանի տիկնոջ՝ Կատարինե Լիսիցյանի հարազատները բնակվել են Ռոստովում և Նոր-Նախիջևանում:

⁷ գտա Զարիֆյանը, -- Շանթի ճեմարանական ընկերներից և տ. Լիսիցյանի հարազատեն-

րից: Հոգևորականներից ստացած այս տպավորութունները կարևոր հավելում են բերել գրողի ճանաչողութանը և հասունացրել «Դարձը» վիպակի հղացումն ու կատարումը:

⁸ սուր Խաչ ալ գացի անմիջապես, — նոր Նախիջևանի ս. Խաչ վանքը կառուցվել է 17-րդ դարի վերջերին: 1784-ին այստեղ բացված թեմական դպրոցը գործել է շուրջ 140 տարի:

⁹ ...բոլորն ալ վարդապետ կամ տերտեր, — Շանթը շարունակում է հոգևորականութան վերաբերյալ իր վերաբերմունքն արտահայտել: Տե՛ս նաև ծան. 7:

¹⁰ ...բազմաթիվ պաշտոններուդ վրա երկուսն ալ ավելացած է՝ դերասանականը ու ձայնավորականը. — Ստ. Լիսիցյանը Շիրվանշահի, Մ. Աբեղյանի, Ստ. Մալխասյանցի և բժ. Վահան Արծրունու հետ Թիֆլիսի «Դրամատիկական ակումբի» անդամ էր, ինչպես և քննարկել էր Թիֆլիսի քաղաքային դրամայի քարտուղար:

¹¹ Խափարյանին գոնե երկու մասականը կ'ըստանամ, — Եղիզարյանը Շանթի ուսանողական տարիների բարեբարներից է:

¹² Օճեհիկը ժեն, է հիմա, — Խոսքը ճեմարանի իր ընկեր, նույնպես արևմտահայ Օնեհիկ Գերակյանի՝ դաշնակցական կուսակցության հայտնի գործիչ Արշակ Վոսմայանի մասին է:

¹³ Զոհրաբյանեն չափազանց շնորհակալ եմ, — Զոհրաբյանը Վարշավայում հաստատված հայ վաճառական է, որը Լիսիցյանի միջնորդումով կարևոր դեր է կատարել Շանթի ուսանողական կյանքում և շահել գրողի խոր երախտագիտությունը:

¹⁴ Խամակ մը գրած եմ քեզի Րաստովեն, — Խոսքը նախորդ՝ 3 ապրիլի, 1897 թվակիր նամակի մասին է:

¹⁵ ...քաղ մը ճանապարհին — Այդ քարտը մեզ չի հասել:

¹⁶ ...ճամակ մը և քաղ մը հոսկե, — Այդ նամակն ու քարթը հավանաբար հասցեատիրոջը չեն հասել:

¹⁷ Վեպիս արտագրությունը շուտով կը վերջանա, — Խոսքը վերաբերում է «Վերծին» վեպին, որը տպագրվել է 1897-ին, «Մուրճ» ամսագրում:

¹⁸ Այդ քալ Ալեքսանդր Մակեդոնացիին պատմության պատմությունը, — Լիսիցյանը Շանթից խնդրել է Ալեքսանդր Մակեդոնացու վերաբերյալ մի շախատութուն, որի մասին խոսվում է նաև հետագա նամակներում:

¹⁹ Սակայն եք շնաջողացնեմ այս ամառ Օճեհիկս երբալու, — տե՛ս ծան. 12:

²⁰ Քալ կարծիքդ կուզեմ մանավանդ վերջին 4 գլուխներու համար, — Հիշյալ գլուխները Շանթը վերանայել է Լիսիցյանի ցանկությամբ. այդ պատճառով էլ հետաքրքիր է իմանալու ընկերոջ կարծիքը:

²¹ Ես հիմա սկսած եմ նոր գործի, — Խոսքը վերաբերում է «Դարձը» վիպակին: Լույս է տեսել 1898-ին, «Մուրճ» ամսագրում:

²² Բայց իմ Լեոմոնտովն ու Թուրգենևը ոչ Զուտերմանի հետ կը փոխեմ..., — Հերման Զուտերման (1857—1928), գերմանացի գրող:

²³ ... ոչ ալ Ստրինտպերկի..., — Յոհան Ավգուստ Ստրինտբերգ (1849—1912), շվեդ գրող:

²⁴ ... գրած եմ վեպ մը («Դարձ»), — տե՛ս ծան. 21:

²⁵ ... երկը փոքր բան մըն է («Դուստրիներու» կեսին չափ), — «Դուստրիները» լույս է տեսել «Մուրճ» ամսագրի 1885 թ. նոյեմբերի, դեկտեմբերի և 1886 թ. հունվարի, փետրվարի համարներում: Առանձին տպվել է 1886-ին Թիֆլիսում:

²⁶ ... այդ չոր ու իմ ծանր շի համարվող նյութին վրա ինկա, — Երևութապես գուցե Շանթը ճիշտ է, բայց ըստ էության՝ ոչ: Տե՛ս ներկա հրատարակման ներածական խոսքում: Նրա թե՛ր քանաստեղծությունները, թե՛ «Լեոնան աղջիկը» վիպերգն ու «Երազ օրերը» նույն թրթռան հեթանոս շունչն ունեն, ինչ «Դարձը»: Այս երկը ուրույն թելերով հարազատություն է ստեղծում նաև «Հին աստվածների» հետ:

²⁷ ... վերջին Կովկաս գալես ավելի գրգռված դուրս հորդեցին, — տե՛ս ծան. 7, 9:

²⁸ Վեպիս քեմը Պոլսի մեկ անկյունն է, ֆոնը՝ ծովը. վերնագիրը հավանաբար «Դերասանուհին» է. — Վեպն առաջին անգամ լույս է տեսել «Մասիս» կիսամյա հանդեսի մեջ 1898, 1899 թվականներին:

²⁹ ... կարծես իմ վրայես բան մը քեթեցավ, — Շանթը անկեղծորեն շահագրգռվել է իր մտերիմների բեղմնավոր կյանքով:

³⁰ Զայնավոր ընտրվելուդ հաշտված եմ արդեն, — Խոսքը Թիֆլիսի քաղաքային դրամայի պատգամավոր ընտրվելու մասին է: Տե՛ս նաև ծան. 10:

³¹ Թարգմանությունը ավարտելով ալ կընտրեմ, — Լեհական գրականության դասական Ներիկ Սենկևիչի, «Յո՞ք երթաս» վեպի մասին է Խոսքը, որ բնագրից թարգմանել է 1898-ին տպագրել է Ստ. Լիսիցյանը:

³² Թումանյանեն դեռ ոչինչ ստացած շեմ հոս գալես ի վեր, — Խոսքը Աշոտ Թումանյանի մասին է, որ հայոց լեզու է դասավանդել Լիսիցյանների մասնավոր դպրոցում և եղել է նրանց ընտանիքի բարեկամներից:

³³ ... իջխանունի կողմեն ուղարկած 60 բուրլին իր ժամանակին ստացած են, — եսսը չայ գրականության շերտ բարեկամ Մարիամ Քումանյանի մասին է, որ եղել է երկու մտերի ընկերներին՝ Լ. Շանթի և Հովհ. Քումանյանի տաղանդի երկրպագուն և մասնավորապես անփութարիներին դեր կատարել չայ մեծագույն բանաստեղծի ստեղծագործական կյանքում:

Х. Г. ВАРТАНЯН — Письма Левона Шанта Степаносу Лисициану. — Как предыдущие публикации писем Левона Шанта Степану Лисициану, так и нынешняя имеют в виду историческую, культурологическую и научную значимость этих писем. В данном случае предлагается начальный этап этой переписки. Здесь со всей очевидностью вырисовывается важная роль Ст. Лисициана в жизни будущего выдающегося писателя.